Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի <<Շենավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի զինղեկի և ՆԶՊ–ի (սպայի կոչումը պարտադիր է) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնագետի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում(ձև1), 1 լուսանկար 3X4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում):

-ինքնակենսագրություն (Ձև 5),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գլխավոր կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

-որոկավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակը վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 5-ից մինչև հոկտեմբերի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 20-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Շենավանի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Շենավան, փ. 20, շ. 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093-751696 հեռախոսահամարով: